ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

GENERAL SECRETARY

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 58 02 42 , Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Правительский дом 2, 0010, V. Sargsyan 3, Governmental House 2, Yerevan, secretariat@edu.am, www.edu.am

N 04.1/23/30705-19 25 12 2019թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ տկն Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
էլ. փոստ՝ foi@foi.am

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2019 թ. դեկտեմբերի 19-ի թիվ 344-11 առցանց հարցման՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 2019 թվականի ընթացքում կազմակերպված գնումների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ մեկ անձից իրականացված գնումների), ներառյալ կնքված պայմանագրերի պատճենները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ձևաչափով տեղադրված է պայմանագրերի կառավարման ու գնումների հաշվետվողականության armeps.am/ppcm համակարգում, իսկ մեկ անձից կատարված գնումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ նաև www.e-gov.am կայքում, որոնք հասանելի են հանրությանը:

Ինչ վերաբերում է նախարարության պաշտոնական կայքում հրապարակված պայմանագրերին, ապա տեղեկացնում եմ, որ www.edu.am կայքում, «Նախարարություն» բաժնի «Գնումների գործընթաց» ենթաբաժնում հրապարակված են ՀՀ կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացված այն գնման գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց գնման գինը գերազանցում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված գնումների բազային միավորը:

25.12.2019

X

Հարգանքով՝
ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Подписано. MURADYAN SAMVEL 1104630109

/պարտականությունները կատարող/

Կատ.՝ ՀՀ ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի
և տեղեկատվության վարչություն
Հեռ. 010-52-73-43